ՄՈՍԿՎԱՅԻ Մ.Վ.ԼՈՄՈՆՈՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻՆ ԿԻՑ Ա.Հ.ԵՐԻՑՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

ГИМНАЗИЯ ИМЕНИ А.Г.ЕРИЦЯНА ПРИ ФИЛИАЛЕ МОСКОВСКОГО
ГОСУДАРСТВЕННОГО УНИВЕРСИТЕТА ИМЕНИ М.В.ЛОМОНОСОВА

✉ ՀՀ, ք. Երևան, 0070, Վարդանանց 17շ. ☎ +374 11 900111 (114) Email: School@msu.am

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԹԵՍՏ

<< >> _____2022թ.

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ (Ավագ դպրոց)

Նստարանի համարը [ ]

ՍՏՈՒԳՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

ՍՏՈՒԳՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Առաջադրանք 1	միավոր	Առաջադրանք 12	միավոր
Առաջադրանք 2	միավոր	Առաջադրանք 13	միավոր
Առաջադրանք 3	միավոր	Առաջադրանք 14	միավոր
Առաջադրանք 4	միավոր	Առաջադրանք 15	միավոր
Առաջադրանք 5	միավոր	Առաջադրանք 16	միավոր
Առաջադրանք 6	միավոր	Առաջադրանք 17	միավոր
Առաջադրանք 7	միավոր	Առաջադրանք 18	միավոր
Առաջադրանք 8	միավոր	Առաջադրանք 19	միավոր
Առաջադրանք 9	միավոր	Առաջադրանք 20	միավոր
Առաջադրանք 10	միավոր	Առաջադրանք 21	միավոր
Առաջադրանք 11	միավոր		
		ԸՆԴԱՄԵՆԸ՝	միավոր

Երևան 2022

ՀԱՐԳԵԼԻ ՛ԴԻՄՈՐԴ

Ընդունելության թեստը բաղկացած է 3 մասից:

I մասը գնահատվում է 10 միավոր, ընդգրկված է 5 հարց, յուրաքանչյուրը գնահատվում է 2 միավոր:

II մասը գնահատվում է 30 միավոր: Տրված բնագրի հիման վրա անհրաժեշտ է կատարել 15 առաջադրանք, յուրաքանչյուրը գնահատվում է 2 միավոր:

III մասում առաջարկվում է փոխակերպել տրված նախադասությունները և կազմել գծապատկեր: Առաջադրանքը գնահատվում է 10 միավոր. յուրաքանչյուր առաջադրանքը գնահատվում է 2 միավոր: Փոխակերպումներում թույլ տրված ուղղագրական կամ կետադրական յուրաքանչյուր սխալի համար հանվում է 0.1 միավոր, գծապատկերը կազմելիս նախադասությունը չհամարակալելու համար՝ 0.5 միավոր:

Խնդրում ենք ուշադիր կարդալ առաջադրանքները, գրել հստակ, առանց ջնջումների:

Առաջադրանքները կատարելու համար հատկացվում է 120 րոպե:

ՄԱՍ I

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 1. *Ըստ անհրաժեշտության լրացնել բաց թողած տառերը.*

Կաթնահուն__, ակնակապի__, օրըստօր__, բոցակե__, ապա__աժ, արդար__, քամել__ն, խոր__ուբոր__, ամենա__ական:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 2. *Վերականգնել տրված բառերի հնչյունափոխված արմատների անհնչյունափոխ տարբերակները.*

Ոսկեծոպ _____ *Տրտմորեն*_____

*Երկնաքեր*_____ *Օրինակ*_____

*Միգամած*_____ *Արնաներկ*_____

*Շքերթ*_____ *Բնավեր*_____

*Ոգևորություն*_____ *Սգավոր*_____

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 3. *Տրված բառերն ըստ անհրաժեշտության գրել միասին, անջատ կամ գծիկով.*

Զուգված (զարդարված), մեն (մենակ), տեր (Գրիգոր), կողքից (կողք), երես (երեսի), գլուխ (գործոց), երկինք (գետին), գեներալ (մայոր), լռիկ (մնջիկ), տասից (տասնհինգ).

_____

_____

_____

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 4. *Ընդգծել այն բաղադրյալ հատուկ անունները, որոնց միայն առաջին բաղադրիչն է գրվում մեծատառով.*

ՎԱՅՈՑ ՁՈՐ, ՊԱՐՍԻՑ ԾՈՑ, ԳԵՎՈՐԳՅԱՆ ՃԵՄԱՐԱՆ, ՄԽԻԹԱՐՅԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄ, ՈՒՍՈՒՑՉԻ ՕՐ, ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹԱՏԵՐԱԿԱՆ ԳՈՐԾԻՉՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ, ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ, ՆՈՐ ՏԱՐԻ:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 5. *Կետադրել.*

Պարսկաստանի Շիրազ քաղաքի արևակեզ օրերից էր հագեցած օդեղեն տրամադրությամբ: Աչքդ որքան կտրում է ոսկևորված ծաղկաստաններ են այգեվետ հեռաստաններ: Բույրեր են վարդերի ու նարգիզների թույրեր վարդագույն շառագույն ընկույզի երկին միտող բարձրուղեշ ծառեր հարյուրամյակների գաղտնիքները սաղարթների մեջ փարթամ որթատունկեր արևային քաղցրահյութ ողկույզներով:

ՄԱՍ II

Կարդալ բնագիրը և կատարել 6-20 առաջադրանքները.

(1) Ջավախքի ութսուն գյուղերից ամենահայտնին՝ Գանձան, կախված է անդնդախոր կիրճի՝ դարերի ընթացքում մրրիկներից ծեծկված, արևի բոցակեզ ճառագայթներից ճաքճքած ժայռերի վրա: (2) Չորսբոլորը ուղղաձիգ լեռնաշղթաներ ու գաճաճ բլուրներ են՝ բարձրաբերձ, սուրսայր ու հարթ կատարներով, ծաղկաբույր ալպյան մարգագետիններ՝ երփներանգ փարթամ բուսականությամբ: (3) Բախվելով ժեռ քարափների՝ շառաչում է գետը՝ սպիտակ փրփուրն ու կատաղի մռնչյունը շուրթերին, գահավիժում է թավալգլոր՝ ականակիտ Փարվանայի պաղպաջուն ջրերը հասցնելով Սաղամո լիճը, այնտեղից էլ Քուռ գետը: (4) Երեկոյան, երբ արեգակի հրաշեկ գունդը թեքվում է դեպի արևմուտք, հեքիաթն անէանում է՝ տարրալուծվելով գիշերային խավարում, և լուսնկայի աղոտ լույսի տակ տարորոշվում են միայն հանդիպակաց բարձունքների՝ երկինք կարկառող գագաթները: (5) Գանձան՝ կորնթարդ բլրակներով, անհեթեթ ձևված ապառաժներով, գույնզգույն ապարներով, շքեղաշուք պերճանքով այդ դրախտը, ինչ-որ ձգողական ուժ ունի, բանաստեղծական անմեկնելի հմայք՝ բնորոշ միմիայն իրեն:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 6. *2-րդ նախադասությունից դուրս գրել 4 բարդ բառ.*

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 7. *3-րդ նախադասությունից դուրս գրել 4 ածական.*

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 8. *1-ին նախադասությունից դուրս գրել սեռական հոլովով դրված 4 գոյական.*

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 9. *4-րդ նախադասությունից դուրս գրել 2 անկախ դերբայ և որոշել տեսակը.*

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 10. *Որոշել 5-րդ նախադասության* ունի *բայի եղանակը, ժամանակաձևը, դեմքը, սեռը.*

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 11. *4-րդ նախադասությունից դուրս գրել դերբայական դարձվածը և նշել՝ ինչ դիրքով է դրված.*

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 12. *Տեքստից դուրս գրել կապի 2 օրինակ.*

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 13. *1-ին նախադասությունից դուրս գրել որոշչի 2 օրինակ.*

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 14. *5-րդ նախադասությունից դուրս գրել բացահայտչի և բացահատյալի 1 օրինակ և նշել բացահայտչի տեսակը.*

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 15. *Տեքստից դուրս գրել դերանվան 2 օրինակ.*

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 16. *2-րդ նախադասությունից դուրս գրել բաղադրյալ ստորոգյալի 1 օրինակ.*

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 17. *1-ին և 3-րդ նախադասություններից ո՞րն է բարդ.*

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 18. 2*-րդ նախադասությունից դուրս գրել հետադաս որոշչի 1 օրինակ.*

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 19*. 4-րդ նախադասությունից դուրս գրել հեռացած հատկացուցչի և հատկացյալի 1 օրինակ.*

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 20*. 3-րդ նախադասությունից դուրս գրել ձևի պարագայի 1 օրինակ.*

ՄԱՍ III

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 21. ՓՈԽԱԿԵՐՊԵԼ ՏՐՎԱԾ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԿԱՋՄԵԼ ՏՐՎԱԾ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ (ԱՌԱՋԱԴՐԱՆՔ *21.5)* ԳԾԱՊԱՏԿԵՐԸ:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ *21.1 Բարդ նախադասությունը փոխակերպել պարզի.*

ա) Գյուղը, որ երևում էր հեռվից, վաղուց դատարկվել էր:

բ) Հենց տուն էր մտնում, առաջինը պիտի պապին տեսներ:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ *21.2 Պարզ նախադասությունը փոխակերպել բարդի.*

ա) Զորքի հետ քաշվելու դեպքում պարտությունն անխուսափելի է:

բ) Կանաչի մեջ թաղված սարերը կանգնած էին հպարտ:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ *21.3 Ուղղակի խոսքը փոխակերպել անուղղակիի.*

ա) –Միտքդ չեմ հասկանում, հստակ խոսի՛ր,- ասաց գյուղի քահանան:

_____

_____

_____

բ) –Որոշել եմ այս ամառ գնալ մի հեռավոր գյուղ,- հայտնեցի ես մորս:

_____

_____

_____

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ *21.4 Անուղղակի խոսքը փոխակերպել ուղղակիի.*

ա) Ընկերս ինձ ասաց, որ տարված է Վերդիի օպերաներով:

_____

_____

_____

բ) Թագավորն իր սպարապետին ասաց, որ զորքերը պատրաստ պահի:

_____

_____

_____

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ *21.5 Կազմել տրված նախադասության գծապատկերը (համարակալել նախադասությունները).*

Արաքս գետը ապշած էր և խորին վրդովմունքով ճիգ էր անում, որ դուրս ժայթքի: